

ՌԴ ՄՈՍԿՎԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Առողջապահության բնագավառում համագործակցության համաձայնագիրը ստորագրվել է 1999թ. փետրվարի 11-ին, Երևանում:

Ստորագրող կողմերն են ՀՀ առողջապահության նախարարությունը և Մոսկվայի կառավարության առողջապահության կոմիտեն:

Համագործակցության շրջանակներն են.

- բնակչության առողջության պահպանմանն ու ամրապնդմանն ուղղված առաջնահերթ ծրագրերի ու խնդիրների լուծում
- շրջակա միջավայրի պաշտպանություն և սանիտար-հակահամաճարակային վերահսկման ծրագրեր, էկոլոգիական մաքուր սննդի միմյանց նատակարարման նկատմամբ հսկողության ապահովում
- առողջապահական հաստատությունների և մարմինների միջև ուղղակի կապերի ընդլայնում
- համատեղ գիտական հետազոտությունների անցկացում, կադրերի պատրաստում, մասնագետների և բժշկատեխնիկական տեղեկության փոխանակում, դիագնոստիկայի ու բուժման նոր մեթոդների կիրառում և մեթոդական նյութերի մշակում, սիմպոզիումների կազմակերպում
- հիվանդների փոխադարձ գործուղում քվոտային հիմունքներով, ընդ որում ընդունող կողմը վերցնում է բոլոր ծխսերը, բացի ճանապարհածախսից
- կողմերի միջև փորձագիտական աշխատանքային մշտական խմբի ստեղծում
- կոնֆերանսների, համագումարների և նմանատիպ միջոցառումների կազմակերպման մասին փոխտեղեկատվություն, միջոցառումներին գործուղող կողմի հաշվին մասնակցող մասնագետների ընդունելություն
- արտակարգ իրավիճակներում անվճար բուժա-խորհրդատվական և մարդասիրական օգնության տրամադրում
- բժշկական բարձրագույն և միջնակարգ ուսումնական հաստատությունների ուսումնական պլանների և ծրագրերի համատեղ աշխատանքների ծավալում, ասպիրանտների, ուսանողների և սովորողների կոմերցիոն սկզբունքով փոխանակություն
- բժշկական կադրերի քվոտային հիմունքով հետդիպլոմային պատրաստում և վերապատրաստում, ինչպես նաև կոմերցիոն սկզբունքով վերաորակավորման հնարավորության ստեղծում